

Հաստատում եմ՝

Վանաձորի Հ. Թումանյանի
անվան պետական համալսարանի

ռեկտոր, տեխն. գ. դ., պրոֆ. Մահակյան

18 ապրիլի, 2024 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ Անուշ Անդրանիկի Խաչատրյանի՝ «Էլեկտրոնային մամուլի լեզուն (բառային կազմ, քերականական համակարգ)» ատենախոսության մասին՝ ներկայացված բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար՝ Ժ.02.01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ:

Կարծիքն ընդունվել է ՎՊՀ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի նիստում (15.04.2024 թ., արձ. թիվ 12)՝ բաց քվեարկությամբ: Նիստին մասնակցում էին ամբիոնի անդամներից 13-ը՝ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.թ, դոցենտ Հ. Բաբոյան, բ.գ.դ, պրոֆ. Թ. Շահվերդյան, բ.գ.թ, դոցենտ Ա. Սանթրոյան, բ.գ.թ, դոցենտ Դ. Գյուլգասոյան, բ.գ.թ, դոցենտ Ա. Պողոսյան, բ.գ.թ, դոցենտ Լ. Պետրոսյան, բ.գ.թ, դոցենտ Շ. Ղուկասյան, բ.գ.թ, դոցենտ Վ. Փիլոյան, բ.գ.թ, դոցենտ Գ. Հովհիվյան, բ.գ.թ, դոցենտ Գ. Պապյան, բ.գ.թ, դոցենտ Տ. Դանիելյան, բ.գ.թ, Բ. Ղազարյան, բ.գ.թ, դոցենտ Ս. Թումանյան:

Անուշ Խաչատրյանի ատենախոսությունը մասնավոր լեզվաբանական հետաքրքրություն ունեցող և արդիականությամբ կարևոր խնդրի է վերաբերում՝ առցանց լրատվության ոլորտի լեզվական գործառությանը: Եղել են, իհարկե, ցանցային հայ լրատվադաշտի լեզվական խնդիրներին մի քանի էական անդրադարձեր, սակայն դիտարկվող այս ատենախոսության մեջ ընդգծելի է հատկապես հետազոտության ոճաբանական հայեցակերպը, որը սկսվում է բառային կազմի բաղադրիչներից և ամբողջանում լայնահուն տեքստի քննությամբ:

Աշխատանքը, ըստ կարգի, ունի ներածություն, որ բովանդակում է հարցի պատմությունը, երեք գլուխ, եզրահանգումներ և օգտագործած գրականության ցանկ:

Առաջին գլխում վեր են հանվում լրագրային ժանրերի լեզվական առանձնահատկությունները: Երկրորդում քննվում է լրատվական ոլորտում դրսևորվող բառային կազմը՝ գործուն և ոչ գործուն բառաշերտերով, նորաբանությունների ու հնաբանությունների, փոխառությունների ու օտարաբանությունների, դարձվածքների,

շեղալեզվական բառերի ու գոեհկաբանությունների և այլ իրողությունների դիտարկմամբ: Երրորդ գլուխը ներառում է քերականական առանձնահատկությունների ուսումնասիրությունը՝ ձևաբանական և շարահյուսական թևերով: Ձևաբանական հատվածում ատենախոսն ուշադրության կենտրոնում է պահում նյութական խոսքի մասերը՝ բացի մակբայից: 3.1.1 տիրույթում քննության է առնում բոլոր անվանական (ներառյալ դերանունը) խոսքի մասերը, 3.1.2 տիրույթում՝ բայը: Շարահյուսական թևում հեղինակը հաջորդաբար դիտարկում է էլեկտրոնային մամուլում արտահայտվող նախադասության տեսակները՝ կառուցվածքային և կազմաբանական ենթատեսակներով, խոսքային կաղապարները, էլեկտրոնային լրատվության վերնագրային յուրահատկությունները, ապա վեր հանում շարահյուսական մերժելի կիրառությունները: Երրորդ գլխին հաջորդում են եզրակացությունները, օգտագործած գրականության ցանկը՝ աշխատությունների, հոդվածների, բառարանների, այլալեզու մատենագրության բաղադրիչներով, որոնցից վերջինը հեղինակն անհաջող կերպով անվանել է «այլալեզու աղբյուրներ», իսկ վերջում բերված է էլեկտրոնային թերթերի ցանկ (աղբյուրները սրա նք են):

Ատենախոսությունը գնահատելի է մի քանի առումով:

Ա) Ատենախոսը նյութը խմբավորելու նպատակով կարողացել է հմուտ ընտրանքով հաղթահարել լրատվական «ծովից» անհրաժեշտ բաղադրիչների արտածման դժվար աշխատանքը, և իր աշխատանքի բաժինների առանձնացումն ու միավորների՝ մակարդակային հաջորդականությամբ գնությունը առհավատչյան է այդ հմտության:

Բ) Հատկապես հայաստանյան իրականության մեջ լրատվանյութը հակընդդեմ հայացքների անօրինակ գործիք է, և նրանով հետաքրքրված անձը, անկախ նյութի ուսումնասիրության նպատակից, հեշտությամբ կարող է հայտնվել այս կամ այն հայացքի ծուղակում: Տարաբնույթ քաղաքական հայացքներ կրող քաղաքական գործիչներից բերելով օրինակներ, որոնցում քիչ չեն փանջունիական անհեթեթությունները՝ սույն աշխատանքի հեղինակը սառնասիրտ է դրանց նկատմամբ, որևէ ակնարկով անգամ հեզմանքի գնահատական տալու գայթակղությանը չի տրվում և սահմանափակվում է դիտարկվող լեզվանյութի բառային միավորների, դարձվածքների մատնանշմամբ՝ այսպանանքի լեզվաբանական գնահատականով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գ) Հենց սկզբում նշեցինք, որ այս ատենախոսությունն աչքի է ընկնում հատկապես լրագրանյութի ոճաբանական մեկնակետերով: Չկա մի լեզվական միավոր, որն անտեսված լինի ոճական դերի գնահատման առումով: Յուրաքանչյուր խոսքային ատաղձի համար տրված է ոճաբանական հիմնավորում, և, որ նույնպես կարևոր է, շեշտադրվում է գրական լեզվում նսեմ ոճի անթույլատրելիությունը:

Դ) Լրատվադաշտը առաձիգ տարողությամբ մտավոր միջավայր է, որում ի հայտ եկած խոսքով ու ոճով հնարավոր է վեր հանել հանրության բազմաշերտությունը: Սա անխուսափելի է դարձնում լրագրության լեզուն ուսումնասիրելիս հանրալեզվական, ուստի և հանրալեզվաբանական տիրույթներին առնչելը: Ատենախոսը պատշաճ անդրադարձ կատարել է այս ոլորտին: Հանրալեզվաբանությունը, ինչպես հայտնի է, լեզվաբանության և հանրաբանության հանգակետում ստեղծված միջգիտակարգ է: Փաստորեն հետաքրքիր իրողության առաջ ենք հայտնվում: Մեր աչքի առաջ ստեղծվում է մեկ այլ միջգիտակարգ՝ լրագրալեզվաբանություն, որը ոչ թե երկու ինքնուրույն գիտության, այլ մեկ ինքնուրույն գիտության՝ լեզվաբանության, և մեկ միջգիտակարգի՝ հանրալեզվաբանության հանգակետում է ձևավորվում, ըստ որում ձևավորումը երկու բևեռով է արդյունանում՝ ա) լրագրալեզվաբանության, որի ուսումնասիրության առարկան լրանյութն է՝ լեզվաբանական հետազոտության նպատակով, և բ) լեզվալրագրաբանության, որի ուսումնասիրության առարկան լրանյութի լեզուն է՝ լրագրաբանական ընդհանրացումների և դասդասումների հետանկարով:

Կարծում ենք՝ բերված կետերով պարզ է դառնում Անուշ Խաչատրյանի հիշյալ ատենախոսության արժանավորությունը:

Ստորև, հենց ատենախոսին օգնելու նպատակով, հարկ ենք համարում մեր մի քանի նկատառումների թվարկումը:

Ա) Արդեն ասացինք, որ ատենախոսությունը գնահատելի է նաև հանրալեզվաբանական կտրվածքով, և հեղինակի շարադրանքից էլ երևում է նրա՝ այս միջգիտակարգին ծանոթ լինելը: Բանն այն է, որ հանրալեզվաբանությանն առնչվելով՝ հետազոտողն այս կամ այն չափով աղերսվում է ընդհանուր լեզվաբանությանը, իսկ սա լրացուցիչ պարտավորություն է առաջացնում ուսումնասիրողի համար՝ առավել զգոն լինելու լեզվաբանական հասկացությունները ձևակերպելիս, մեկնելիս և տերմինավորելիս: Հեղինակը խոսում է ժարգոնի առանձնահատկությունների մասին, համապատասխան հղումներ է տալիս, սակայն հենց հղումներից պարզ է դառնում, որ



խոսքն իրականում ոչ միայն ժարգոնի, այլև արգոյի մասին է, որոնք ատենախոսը հայերեն հավասարապես «ժարգոն» է անվանում (էջ 66): Եթե ատենախոսը տեղյակ լիներ, որ Հայաստանում հանրալեզվաբանության և ընդհանուր լեզվաբանության դասընթացներին բերված տերմինների հայերեն համարժեքներն են շրջանառվում, ինքնին հասկանալի կլիներ տարբերությունը, և չէր շփոթի: «Ժարգոնը» շեղալեզուն է, որ իրականում մեծ վտանգ չի ներկայացնում գործող լեզուներում և ինչ-որ առումով վկայությունն է այդ լեզուների կենդանության, մինչդեռ «արգոն» ծածկալեզուն է՝ գողալեզուն, և անթույլատրելին ու պախարակելին սրա՝ տարածումն է, որը, սակայն, փութաջանորեն է տարածվում հատկապես հանրային հեռուստաընկերության միջոցով՝ ի տես իմաստագուրկ, ցածրակարգ սերիալների:

Բ) Խոսելով տերմինների հայերեն համարժեքների մասին՝ չենք կարող անտեսել հայերեն ընդունված, նույնիսկ կառավարության որոշումներով հաստատված բազմաթիվ տերմինների (և ոչ միայն տերմինների) փոխարեն օտար միավորների գործածության փաստը: Ահա մի քանի օրինակ՝ *հիպերհոլում, հիպերմեդիա, անիմացիա, ստատիկ, ինտերակտիվ, ֆորում, չաթ, մոդել, ռեպորտաժ, վիրտուալ, մոնիթորինգ, օրիգինալ, մեդիաֆայլ, օպերատիվություն, մարքետինգային, մոտիվացնող, ասոցացվել, քրոնիկ և այլն, և այլն*: Գոնե լեզվաբանի բառապաշարում նշվածները չպիտի լինեն, մանավանդ որ ատենախոսը հմտորեն է տիրապետում հայերենի բառակազմական նրբություններին:

Գ) Թերևս այս օտարաբանությունների տարափը չլիներ աշխատանքում, եթե հեղինակը (ոչ իր մեղքով) չտրվեր փոխառությունը լեզվի հարստություն համարող հայ լեզվաբանության մտայնությանը, որը գալիս է ռուս լեզվաբանությունից, իսկ ռուսերենի համար միանգամայն արդարացված է նշված մտայնությունը՝ պայմանավորված այդ լեզվի դինամիկ ձևով, որի դրսևորումներից մեկն է օտար տարրերի՝ պատրաստի եղանակով յուրացումը՝ ի տարբերություն հայերենի, գերմաներենի և բազմաթիվ այլ լեզուների դինամիկ ձևի, որոնցում այդ տարրերը գերազանցապես յուրացվում են թարգմանաբար: Նույնիսկ արդի հայ հանրության քառասային և լեզվական անվերահսկելիության վիճակում հայերենի դինամիկ ձևն իր պարտադրանքն է թելադրում՝ «կոմայյուտերի» փոխարեն՝ «համակարգիչ», այսօր արդեն նույնիսկ «սոցիալական ցանցի» փոխարեն «հանրացանցի» գործածության: Խոսքը ոչ թե փոխառություններից հրաժարվելու, այլ այն անվերահսկելիության չափ գրկաբաց ընդունելու մասին է (ինչպես երևաց մեր խոսքից՝ «դինամիկ» բառը ևս փոխառություն



է): Օրինակները բազմաթիվ են, սակայն միայն այս երկուսն էլ բավական են՝ խորքից ընկալելու ժամանակին մեզ հոգեբանորեն պարտադրած մտայնության վտանգավորությունը:

Դ) Աշխատանքում պատահում են անհաջող ձևակերպումներ, տարածված տերմինների անհարկի գուգաձև գործածություններ, ինչպես՝ *տեղեկատվության ստացման առաջնային աղբյուր* (փոխ.՝ իրազեկման...), *դերբայական դարձվածք* և այլն:

Ե) Եզրակացության մեջ (էջ 129) ատենախոսը նշում է, որ «տեղի ու ժամանակի խնայողության սկզբունքից ելնելով՝ մեծ տեղ է տրվում սեղմությանը նպաստող լեզվամիջոցների գործածությանը, որոնցից է հապավումը»: Կարծում ենք՝ ձևակերպումը տեղին չէ, քանի որ համացանցային լրատվամիջոցներում տեղի և ժամանակի խնայողության խնդիր չկա:


Զ) Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսն ուսումնասիրեր նաև այն, թե ինչպես են հիպերտեքստայնությունը, մուլտիմեդիականությունն ազդում լեզվի վրա:


Առաջարկում ենք հետագա ուսումնասիրություններում ուշադրություն դարձնել աղբյուրների ընտրանքին (մասնավորապես՝ azatutyun.am-ը ռադիոկայան է, armenpress.am-ը լրատվական գործակալություն է, aliq.ge-ն Վրաստանում գործող մեդիահարթակ է), որոնցից յուրաքանչյուրը տարբերվում է գործառության և լեզվաարտահայտչական առանձնահատկություններով:

Ինչպես նշեցինք, մեր նպատակն ատենախոսին օգնելն է, որովհետև գնահատելի աշխատանք է կատարել:

Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կարգի պահանջներին, և Անուշ Անդրանիկի Խաչատրյանն արժանի է իր հայցած՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ Ժ.02.01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ:

ՎՊՀ-ի հայոց լեզվի և գրականության
ամբիոնի վարիչ  Բ.Գ.Թ., դոցենտ Հ. Բաբուդյան

Հ. Բաբուդյանի ստորագրությունը վավերացնում եմ՝
ՎՊՀ-ի գիտաբարտուղար  մ.գ.թ., դոցենտ Ս. Բեժանյան



18.04.2024թ.